

**Մեծարգո Վարչապետ, Խորհրդի նախագահ**

2002 թ. հունվար ամսին կայանալիք խորհրդի նիստի քննարկմանն են ներկայացնում «Հայոց Այբուբենի մասին» ՀՀ օրենքի նախագիծը եւ բացատրագիր-հիմնավորում (9 էջ) հետեւյալ բովանդակությամբ.

1. Նպատակ
2. Օրենսդրական հիմքերը
3. Այբբենական ռեֆորմները Սովետական Հայաստանում
4. Ներկայիս այբուբենի հակասականությունը
5. Ներկայացվող տարբերակի հիմնավորումը
6. Առաջարկվող նախագծի իրականացումներն ու փորձաշրջանը
7. Եզրակացություն

Օրենքի հրատապությունը պայմանավորված է ժամանակակից տեղեկատվական համակարգերի աննախընթաց զարգացման պայմաններում հայերեն համակարգերի ստեղծումը, ներդրումն եւ զարգացումը կանոնակարգելու անհրաժեշտությամբ: Այբբենական բարեփոխումների անհրաժեշտությունը թելադրվել է ժամանակի պահանջով եւ պետք է արտացոլի արդի պահանջների, ավանդապահության եւ լեզվամշակութային 1600-ամյա ժառանգության պահպանման եւ զարգացման հրամայականով:

Վերջին 15 տարիների ընթացքում, համակարգիչներում հայերենի ներմուծման եւ հայկական համակարգերի ստեղծման անհրաժեշտությունից ելնելով, Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել եւ շահագործվում են ավանդական այբուբենի հիման վրա ստեղծված հայկական համակարգեր: Այդ համակարգերը ներդրվել եւ գործում են բոլոր բնագավառներում, ապահովում են հայերեն լեզվով հրատարակչական գործունեությունը, տվյալների ներմուծումն ու շտեմավորումը, այս համակարգերով է կատարվում տեղեկատվության փոխանակումն ու մշակումը միջազգային ցանցերով: Կիրառվող ստանդարտներում եւ հայերեն ձեւական համակարգերում այբբենական հավաքածուն համընկնում է առաջարկվող օրենքի նախագծում սահմանված գրանշանների հավաքածուին եւ ղեկավարվում են նախագծում շարադրված դասակարգման սկզբունքներով: Այս համակարգերը միարժեքորեն ընդունվել եւ կիրառվում են Սփյուռքի եւ հայագիտական կենտրոնների կողմից բազմապիսի լեզվամշակութային խնդիրների լուծման համար: Փաստորեն, առաջարկվող նախագիծն ունի լայնածավալ կիրառում, անցել է շուրջ 15 տարվա փորձաքննություն:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՄԱՍԻՆ» նախագծի ընդունումը միարժեքորեն կապահովեր շարադրված նպատակների իրականացման համար անհրաժեշտ իրավական դաշտը:

Կարելի է մայիսի 27-28-ին Երեւանում կայանալիք Հայաստան-սփյուռք երկրորդ համաժողովի աշխատանքում վերոհիշյալ հարցի ներկայացումն ու քննարկումը:

Հարգանքով՝

**Վահրամ Մխիթարյան**  
**Հայհամակարգիչ կենտրոնի**  
**Գլխավոր տնօրեն**  
**11-ը հունվարի, 2002 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՄԱՍԻՆ

### *Նախագիծ*

Սույն օրենքը,

#### **Ելնելով**

Հայաստանի անկախության մասին հռչակագրի 10-րդ կետի,  
ՀՀ Սահմանադրության 12 հոդվածի դրույթներից,

#### **համաձայն**

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ի,  
«Ստանդարտացման եւ սերտիֆիկացման մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի բ. կետի,

#### **սահմանում է**

Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես կիրառվող այբբենական համակարգը՝ Հայոց այբուբենը:

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետությունում գործածվում է Հայոց ավանդական այբուբենը՝ Մաշտոցյան այբուբենը.

Մեծատառ եւ փոքրատառ	<i>Տառի անվանում</i>	Մեծատառ եւ փոքրատառ	<i>Տառի անվանում</i>	Մեծատառ եւ փոքրատառ	<i>Տառի անվանում</i>	Մեծատառ եւ փոքրատառ	<i>Տառի անվանում</i>
Ա ա	<i>Այբ</i>	Ժ ժ	<i>ժե</i>	Ճ ճ	<i>ճե</i>	Բ բ	<i>Ռա</i>
Բ բ	<i>Բեն</i>	Ի ի	<i>իև</i>	Մ մ	<i>Մեն</i>	Ս ս	<i>Սե</i>
Գ գ	<i>Գիմ</i>	Լ լ	<i>Լիև</i>	Յ յ	<i>Յի</i>	Վ վ	<i>Վեև</i>
Դ դ	<i>Դա</i>	Խ խ	<i>խե</i>	Ն ն	<i>Նու</i>	Տ տ	<i>Տիև</i>
Ե ե	<i>Եջ</i>	Ծ ծ	<i>ժա</i>	Շ շ	<i>Շա</i>	Ր ը	<i>Րե</i>
Զ զ	<i>Չա</i>	Կ կ	<i>Կեն</i>	Ո ո	<i>Ո</i>	Ց զ	<i>Յո</i>
Է է	<i>Է</i>	Հ հ	<i>Հո</i>	Չ չ	<i>Չա</i>	Ի լ	<i>Իիև</i>
Ը ը	<i>Ըթ</i>	Ձ ձ	<i>Ձա</i>	Պ պ	<i>Պե</i>	Փ փ	<i>Փիևր</i>
Թ թ	<i>Թո</i>	Ղ ղ	<i>Ղատ</i>	Ջ ջ	<i>Ջե</i>	Ք ք	<i>Քե</i>

լրացված **Օ օ / Օ / եւ Ֆ ֆ / Ֆե / տառերով:**

**Հոդված 2.** Կցագիր « ՈՒ ու », « և » գրանշանները ներկայացվում եւ դասակարգվում են որպես « Ո ո » « Ի լ » եւ « Ե ե » « Ի լ » տառերի զուգակցություններ:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերի եւ ձեռնարկների համապատասխանեցումը սույն օրենքի պահանջներին կատարվում է կառավարության կողմից հաստատված ժամանակացույցի հիման վրա:

**ԲԱՅԱՏՐԱԳԻՐ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**  
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՄԱՍԻՆ»**  
**Նախագծի վերաբերյալ**

---

**Բովանդակություն**

1. Նպատակ
  2. Օրենսդրական հիմքերը
  3. Այբբենական ռեֆորմները Սովետական Հայաստանում
  4. Ներկայիս այբուբենի հակասականությունը
  5. Ներկայացվող տարբերակի հիմնավորումը
  6. Առաջարկվող նախագծի իրականացումներն ու փորձաշրջանը
  7. Եզրակացություն
- 

**1. Նպատակը**

Օրենքը նպատակ ունի

***Կանոնակարգել***

Հայաստանի Հանրապետությունում հայերենի, որպես պետական լեզվի, գործառու-  
թյունը կյանքի բոլոր ոլորտներում՝ կրթության, գիտության, մշակույթի եւ տեղեկա-  
տվական համակարգերում:

***Ապահովել***

Հայաստանի Հանրապետության կողմից լեզվական քաղաքականության հիմնական  
դրույթների ձեւավորումը, լեզվավիճակի կարգավորումը, պետական իշխանության  
եւ կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակեր-  
պությունների լեզվահարաբերությունների կանոնավորումը, հայերեն լեզվով տեղե-  
կատվության համատեղելիությունը, հայերեն 1600-ամյա լեզվամշակույթի միաս-  
նական ներառումն ու ներկայացումը տեղեկատվության արդիական համակարգե-  
րում:

***Նպաստել***

Սփյուռք-Հայրենիք տեղեկատվական կապերի զարգացմանը, արտասահմանում  
բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանն ու տարածմանը, հայերենի  
ուղղագրության միասնականացմանը:

---

**2. Օրենսդրական հիմքերը**

**Հայաստանի անկախության մասին հռչակագիր**

**10.** Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի, որպես պետական  
լեզվի, գործառույթունը Հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում  
կրթության, գիտության եւ մշակույթի սեփական համակարգ:

**Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն**

**Հոդված 12.** Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

## **Հայաստանի Հանրապետության օրենքը լեզվի մասին**

Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում են լեզվավիճակը, պետական իշխանության եւ կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների լեզվահարաբերությունները:

### **Հոդված 1. Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը**

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանն ու տարածմանը:

Հայաստանի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը:

## **Հայաստանի Հանրապետության օրենքը ստանդարտացման եւ սերտիֆիկացման մասին**

### **Հոդված 4. Ստանդարտացման նպատակը**

Ստանդարտացման նպատակն է ապահովել՝ ....

բ) տեխնիկական եւ տեղեկատվական համատեղելիությունը, արտադրանքի համափոխարինելիությունը, ...

---

## **3. Այբբենական ռեֆորմները Սովետական Հայաստանում**

Սովետական շրջանի այբբենական ռեֆորմները խնդիր ունեին բուլշեվիկյան «պրոլետարներ բոլոր երկրների՝ միացե՛ք» կարգախոսի իրականացման համար նպաստավոր պայմաններ ստեղծել: Ըստ բուլշեվիկյան տրամաբանության, առաջին կարեւոր քայլը միասնական պրոլետարական պարզ գրի եւ լեզվի ստեղծումն էր, որը կվերացներ պրոլետարիատի միավորման ճանապարհին կանգնած լեզվական խոչընդոտները: Այս քաղաքական խնդրի լուծման համար ԽՍՀՄ կազմի մեջ մտցված բոլոր ազգերը ենթարկվեցին այբբենական ռեֆորմի՝ անցնելով լատինատառ կամ կիրիլիցայի պարզեցված այբուբենների կիրառմանը, պարզեցված հնչյունական համակարգերի օգտագործմանը: Քանի որ այս փոփոխությունները դիտարկվում էին որպես անցումային փուլ վերջնական միասնական գրի եւ լեզվի ստեղծման ճանապարհին, ապա ռեֆորմները առանձնապես չէին փայլում մտածվածությամբ եւ արդարացվում էին միայն իրենց տակտիկական նշանակությամբ:

Բոլոր ազգերի համար ռեֆորմների հետեւանքները ակնհայտ են՝ պատմական լեզվամշակութային արժեքների կորուստ, սեփական պատմական, գեղարվեստական եւ կրոնական գրականության օտարում, նույն ազգի տարբեր հատվածների կապի թուլացում եւ առանձնացված տեկատվական դաշտի առաջացում, խոսքի հնչյունական փոփոխություն եւ բուն լեզվի օտարում:

Սովետական Հայաստանում առաջին ռեֆորմով, որը տեղի ունեցավ 1922 թվականին, հնարավոր չէրավ միանգամից անցնել լատինատառ այբուբենին, սակայն պարզեցվեց օգտագործվող այբուբենը: Այբուբենից հանվեցին «Է Է», «Օ օ» եւ «Ի, ւ» (Վյուն) տառերը եւ մտցվեց նոր հնչյունական արժեք ունեցող տառ՝ «ՈՒ, ու»: Գրավոր խոսքում «Ի, ւ» Վյուն տառը սկսեցին գրել «Վ, վ» Վեվ տառի միջոցով՝ համապատասխան ուղղագրական

կանոններով: Մասնավորապես կցագիր «եւ»ը գրվում էր «յեվ»: «Է Է» եւ «Է, Լ» տեքստում չէր օգտագործվում, սակայն որպես թվային արժեքներ թույլատրելի էին: Մաշտոցյան, Ավանդական եւ փոփոխված այբուբենները բերված են ստորեւ.

**Մաշտոցյան այբուբեն (401 թ.)**

Ա ա	Ժ ժ	Ճ ճ	Ռ ռ
Բ բ	Ի ի	Մ մ	Ս ս
Գ գ	Լ լ	Յ յ	Վ վ
Դ դ	Խ խ	Ն ն	Տ տ
Ե ե	Ծ ծ	Շ շ	Ր ր
Զ զ	Կ կ	Ո ո	Յ ց
Է է	Յ հ	Չ չ	Ի լ
Ը ը	Ձ ձ	Պ պ	Փ փ
Թ թ	Ղ ղ	Ջ ճ	Ք ք

**Մաշտոցյան այբուբենի թվային համակարգը**

1	10	100	1000
2	20	200	2000
3	30	300	3000
4	40	400	4000
5	50	500	5000
6	60	600	6000
7	70	700	7000
8	80	800	8000
9	90	900	9000

**Ավանդական այբուբեն**

Ա ա	Ժ ժ	Ճ ճ	Ռ ռ	Օ օ
Բ բ	Ի ի	Մ մ	Ս ս	Ֆ ֆ
Գ գ	Լ լ	Յ յ	Վ վ	
Դ դ	Խ խ	Ն ն	Տ տ	
Ե ե	Ծ ծ	Շ շ	Ր ր	
Զ զ	Կ կ	Ո ո	Յ ց	
Է է	Յ հ	Չ չ	Ի լ	
Ը ը	Ձ ձ	Պ պ	Փ փ	
Թ թ	Ղ ղ	Ջ ճ	Ք ք	

**Սովետական առաջին այբուբենը (1922 թ.)**

Ա ա	Ժ ժ	Ճ ճ	Ռ ռ	(Օ օ)
Բ բ	Ի ի	Մ մ	Ս ս	Ֆ ֆ
Գ գ	Լ լ	Յ յ	Վ վ	
Դ դ	Խ խ	Ն ն	Տ տ	
Ե ե	Ծ ծ	Շ շ	Ր ր	
Զ զ	Կ կ	Ո ո	Յ ց	
(Է է)	Յ հ	Չ չ	ՈՒ ու (Ի լ)	
Ը ը	Ձ ձ	Պ պ	Փ փ	
Թ թ	Ղ ղ	Ջ ճ	Ք ք	

\* Օ, Ֆ եւ Ու տառերին թվային արժեքներ չեն վերագրվում

Այս քայլով խզվեցին Սովետական Հայաստանում եւ նրանից դուրս ապրող հայերի միջեւ գրավոր հաղորդակցման հնարավորությունը, անհնար դարձավ միասնական ուսումնական ձեռնարկներից օգտվելը եւ որոշակիորեն լարեց Սփյուռքահայ համայնքների հարաբերությունները Սովետական Հայաստանի հետ:

Յետագա տարիներին հիմնական շեշտը դրվեց ռուսականացման եւ կրթական համակարգի միջոցով ուժացման քաղաքականության վրա, որի արդյունավետությունը շատ ավելին էր, քան այբբենական եւ ուղղագրական ռեֆորմների քաղաքականությունը:

Վերջնական փոփոխությունները, կապված այբուբենի եւ ուղղագրության հետ, տեղի ունեցան 1940 թվականին: Այբուբենում եւ գրավոր խոսքում «t, l» Վյուն տառի բացակայության հետեւանքով ավանդական ուղղագրության վերջնական կորուստը բացառելու եւ հայերեն արմատների շփոթը վերացնելու նպատակով այբուբենը լրացվեց եւս մեկ հատիկ (ոչ թե գույգ) տառով՝ կցագիր «եւ»-ի նշանով, որը չուներ մեծատառ:

**Այսօր կիրառվող սովետական այբուբենը (1940 թ.)**

Ա ա	Ժ ժ	Ճ ճ	Ռ ռ	Լ
Բ բ	Ի ի	Մ մ	Ս ս	Օ օ
Գ գ	Լ լ	Յ յ	Վ վ	Ֆ ֆ
Դ դ	Խ խ	Ն ն	Տ տ	
Ե ե	Ծ ծ	Շ շ	Ր ր	
Զ զ	Կ կ	Ո ո	Յ ջ	
Է է	Հ հ	Չ չ	ՈՒ ու	
Ը ը	Ձ ձ	Պ պ	Փ փ	
Թ թ	Ղ ղ	Ջ ճ	Ք ք	

\* Ա, Օ, Ֆ, ՈՒ տառերին թվային արժեքներ չեն վերագրվում

Որպես մեծատառ օգտագործվում էր կցագիր «և»-ի ներկայացման առաջին ռեֆորմից մնացած ձեւը՝ «Ե»«Վ»,

- ձևայած՝** ոչ որպես միահյուսված մի գրանշանի արժեքով (*ինչպես օրինակ «ՈՒ»՝ որպես «Ո» «Ւ» գրանշանների հյուսված տեսքով մի գրանշան*), այլ ընդհանրապես առանձին տառեր,
- ձևայած՝** փոքրատառերով բառամիջում «եվ» գրել չէր կարելի, այլ միայն «և»,
- ձևայած՝** տողադարձելիս պետք է տրոհվեր «ե» «վ» փոքրատառերի, այլ ոչ թե մևար «և»,
- ձևայած՝** փոքրատառերով գրված «և» պարունակող բառերը պետք է դասակարգվեն ըստ «և»-ի այբբենական դիրքի, այլ ոչ թե «Ե»-ի,
- ձևայած՝** մեծատառերով նույն բառը պետք է դասակարգվի ըստ «Ե» տառի այբբենական դիրքի, այլ ոչ թե «և»-ի,
- ձևայած՝** ... (*«և»-ի ուղղագրական «տրամաբանությունը» շարադրող անբացառական տրամաբանական նախադասություն հնարավոր չէ կազմել*):

#### 4. Ներկայիս այբուբենի հակասականությունը

Այբուբենի վերջին փոփոխություններն ու «և»-ի նորամուծությունը վերջնականապես խաթարեցին հայկական այբուբենը, հայերենում տառի հասկացությունը եւ այբբենական դասակարգման հնարավորությունը (*աշխարհում միայն Սովետահայ տառը կարող է չունենալ մեծատառ, տողադարձման ժամանակ տառի կեսը մնա՝ կեսը տեղափոխվի, բառերը մեծատառերով գրելուց խախտվի գրանշանների քանակը, որակը եւ այբբենական դասակարգման կարգը*):

Սովետահայ բառարանագետների բառարանների հրատարակումից հետո պարզվեց, որ երեւի թե վրացիների սման հայ ժողովուրդն էլ հրաժարվի Սուրբ Մաշտոցից էլ, նրա երկաթագրից էլ եւ այսուհետ գրեն միայն փոքրատառերով: Ե. Աղայանի բառարանը կազմված եւ դասակարգված էր ըստ մեծատառերի, իսկ Յ. Բարսեղյանի բառարանը՝ ըստ փոքրատառերի: Երբ փորձեցին համեմատել բառացանկերը, պարզվեց, որ «և» պարունակող բոլոր բառերն այս երկու բառարաններում տարբեր տեղերում են (*եւ-ն ու եւս-ը, Դեւոն, Սեւոն, Թեւոն, տո՛ հենց Լեւոն՝ խեղճ թագավորին եւ նրա անվանակիցներին Հայկական հանրագիտարանում որ տառի տակ ասես որ չես հանդիպի*):

Ելնելով այս անելանելի վիճակից սովետահայ լեզվաբան-բանասերների մի խումբ՝ ակադեմիկոս Գ. Ջահուկյանի գլխավորությամբ «մահափորձ» կազմակերպեց «և»-ի դեմ: Տերմինաբանական կոմիտե ներկայացվեց մի առաջարկ, որով կցագիր «և»-ը հանվում էր այբուբենից եւ դասակարգվում էր որպես «ե» եւ «վ» տառակապակցության այբբենական կարգով: Նախագիծը մերժվեց ուսուցիչների (ուսուցչուհիների) բողոքների պատճառով (*երեւի թե ցանկություն չկար երեւէ նոր բան սովորելու եւ սովորեցնելու համար*):

Եթե թվարկելու լինենք այսօր կիրառվող այբուբենում կցագիր «և»-ի առակայության հետ կապված հակասությունները, ապա

**ա.** Այբբենական շարքում միատառ «և»-ի առկայությունը թույլ չի տալիս կարգավորել բառերն ըստ այբուբենի, քանի որ նույն բառը տարբեր դիրք է գրավում մեծատառով կամ փոքրատառով ներկայացվելիս: Օրինակ՝ «ԵՎՍ» բառը պետք է տեղավորվի ցուցակի (բառարանի) սկզբում, իսկ «ևս»-ը՝ վերջում:

**բ.** Բառերը միարժեք չեն ներկայացվում մեծատառերով եւ փոքրատառերով՝ փոխվում է նշանների քանակը: Դա թույլ չի տալիս առանց բարդ վերլուծման, ինքնաշխատ ձեւով գտնել-փոխել փաստորեն նույն բառը: Նույնպիսի բարդություններ են առաջանում ինքնաշխատ ձեւով տողադարձ կազմակերպելու դեպքում: Օրինակ՝ «Ե-րևան» եւ «Երեւ-վան»:

**գ.** Կցագիր «և»-ը «եվ»-ով ներկայացնելը չի լուծի առաջացող խնդիրները, որովհետեւ բառամիջում «եվ»-ը միշտ չէ, որ «և»-է: Օրինակ՝ եթե «տերեվաթափ»-ը կարելի է վերածել «տերևաթափ»-ի, սակայն «տարեվերջ»-ը «տարևերջ» չէ:

**դ.** Կցագիր «և»-ը «եվ»-ով ներկայացնելն անընդունելի է ավանդական ուղղագրության տեսանկյունից, քանզի նույն բառերը կներկայացվեն տարբեր տեսքերով եւ չեն ճանաչվի (*ինչպես դա չի կատարվում «ՈՒ» «ու» տառերի դեպքում, եւ որոնք մնացել են ճանաչելի բոլոր ուղղագրությունների տեսանկյուններից՝ ուղղակի ավանդականում նրանք ընկալվում են առանձին, սովետականում՝ միասին*):

## 5. Ներկայացվող տարբերակի հիմնավորումը

Վերը բերված փաստարկները հիմնավոր են եւ պահանջում են կարգավորել այսօր գործածվող այբուբենը: Ընդ որում, խնդրի լուծումն ու տարբերակները անհրաժեշտաբար պետք է դիտարկվեն եւ քննարկվեն 1. կետում շարադրված նպատակների իրականացման տեսանկյունից: Ձեւակերպենք այդ պահանջները այբուբենի նկատմամբ.

**ա.** ապահովի հայերեն բնագրերի եւ բանավոր խոսքի միասնական, լիարժեք եւ միարժեք մուտքագրումը, մշակումը եւ արտապատկերումը (*անկախ ստեղծման տարեթվից, ուղղագրությունից՝ ավանդական, թե սովետական, լեզվից՝ գրաբար, թե աշխարհաբար, արեւելահայերեն, թե արեւմտահայերեն*),

**բ.** լինի լիարժեք, միարժեք եւ անհակասական ձեւական համակարգ եւ լուծի հայերեն տեքստի այբբենական ձեւայնացման, դասակարգման եւ տեսակավորման խնդիրները:

Ստորեւ բերված է ներկայացվող նախագիծը՝

### Մաշտոցյան այբուբենը՝ լրացված Օ օ եւ Ֆ ֆ տառերով

Ա ա	Ժ ժ	Ճ ճ	Ռ ռ	Օ օ
Բ բ	Ի ի	Մ մ	Ս ս	Ֆ ֆ
Գ գ	Լ լ	Յ յ	Վ վ	
Դ դ	Խ խ	Ն ն	Տ տ	
Ե ե	Ծ ծ	Շ շ	Ր ը	
Զ զ	Կ կ	Ո ո	Յ ջ	
Է է	Յ ի	Չ չ	Ի լ	
Ը ը	Ձ ձ	Պ պ	Փ փ	
Թ թ	Ղ ղ	Ջ յ	Ք ք	

\* Օ, Ֆ տառերին թվային արժեքներ չեն վերագրվում

Անմիջականորեն, հարցը կապվում է ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործածվող սովետական այբուբենի եւ ուղղագրության փոփոխությունների հետ: Քննարկենք այդ փոփոխությունները ըստ այբուբենում նրանց ներմուծման-փոփոխման հաջորդականությամբ:

#### « Ի լ » Վյուն տառը

Այս տառի, ե՛լ այբուբենում վերականգնելու հարցը, ե՛լ այբուբենում նրա տեղը որեւէ մեկի կողմից չի՛ շահարկվում եւ չի՛ մերժվում: Միանգամայն բոլորի կողմից դա ընկալվում է 1. կետի եւ վերը շարադրված ա. բ. կետերի պահանջներին բավարարող, օրինաչափ եւ ճիշտ լուծում:

## « ՈՒ ՈՒ » ՈՒ տառը

Փաստորեն այբուբենում բացակայում է սովետական այբուբենի « ՈՒ ու » տառը, սակայն նրա բացակայությունը այնքան էլ չի շահարկվում: Դա կապված է « ՈՒ ու » տառի «Ո ո» եւ «Ի Լ» տառերով ներկայացման եւ այդ ներկայացումով ճանաչելի լինելու հետ: Ինչպես արդեն նշել էինք, այս գրանշանի ամբողջական կամ առանձին գրանշաններով ընկալումը կապված է ուղղագրական մոտեցումներից: Եթե ընդունենք, որ առաջարկը բազային գրանշանների հավաքածու է հայերեն տեքստերի ներկայացման համար, ապա այս նշանի համար «տարբեր ուղղագրություն»-ը դա նույն տեսքի ներկայացման տարբեր ընկալումներ են: Այսինքն տեքստերի վերարտադրման դեպքում ուղղագրական հակասություններ եւ ներկայացումներ չեն առաջանում: Նույն պատճառով, ի դեմս ուղղագրական բոլոր փոփոխություններին, ոչ մի լինոտիպային շարվածքում կամ գրամբենայի ստեղծաշարին երբեւէ չի հայտնվել «ՈՒ ու» գրանշան՝ մշտապես եղել են «Ի Լ» եւ «Ո ո» տառերը, որոնց միջոցով էլ ներկայացվել է «ՈՒ ու» գրանշանը:

Սովետական ուղղագրության կողմնակիցների մի մասը շահարկում է «ՈՒ ու» գրանշանին այբբենական կարգավիճակ տալու հարցը եւ նրա տեղը համարում են այբուբենի վերջում: Այս տարբերակը չի դիմանում ոչ մի տեսակ քննադատությանը, քանզի այբուբենում արդեն իսկ «Ի Լ»-ի առկայությունը այս գրանշանի համար ստեղծում է ոչ միարժեք ներկայացումներ: Փաստորեն նույն գրանշանի համար հնարավորություն է ստեղծվում ներմուծվել ոչ միարժեք, երկակի ներկայացումներով «Ո ո» «Ի Լ» կամ «ՈՒ ու» գրանշանների միջոցով: Վերջինս անընդունելի է վերը նշված ա. բ. կետերում բերված պատճառներով, չհաշված միասնականացման խնդիրները:

## «Լ» տառը

Քանի որ այս տառը նույնիսկ սովետական այբուբենում ստեղծում է ներքին հակասություններ եւ անտրամաբանական մեկնաբանություններ, ապա նրա, այբուբենից վտարվելու հարցը, նույնպես որեւէ մեկի կողմից չի՝ շահարկվում եւ չի՝ մերժվում: Ուրիշ հարց է թե համարժեք նորամուծությունների եւ ներկայացումների կարիք կա, թե՛ ոչ: Այս գրանշանի միարժեք եւ լիարժեք ներկայացման եւ դասակարգման համար քննարկվում են ընդամենը երկու տարբերակ՝ ներկայացում «Ե Ե» «Ի Լ» կամ «Ե Ե» «Վ Վ» տառերով: Սակայն վերջին տարբերակի հետեւանքները շարադրված են 4-ի ա-բ կետերում եւ ընդունելի չեն: Նույնիսկ հակառակը, այսօրվա ուղղագրությամբ տեքստերը պահպանելու եւ հետագայում նույն տեսքով վերարտադրելու համար անհրաժեշտ է «Լ»-ը ներկայացնել «ԵԼ»՝ «Ե Ե» եւ «Ի Լ» տառերով, որպեսզի հետագայում միարժեքորեն «Ե»«Լ»-ը ներկայացվի (*սովետական ուղղագրության տրամաբանությամբ*) որպես «Լ» կամ «Ե»«Վ»: Փաստորեն, «Լ»-ի ներկայացման լիարժեք եւ միարժեք ձեւը նորից մնում է ավանդականը՝ «Ե Ե» եւ «Ի Լ» տառերով:

Մյուս կողմից, ոմանք առաջարկում են ներմուծել մեծատառ «Լ» եւ կարգավորել հարցը այս եղանակով: Այս դեպքը զուգահեռ է «ՈՒ ու» տառի ներմուծմանը եւ, հետեւելով ընդհանուր տրամաբանությանը եւ հաշվի առնելով գրանշանային տեսքի ճանաչելիության պահանջները, դրանք պետք է լինեն «ԵԻ եւ» գրանշանները: Հասկանալի է, որ «Ի Լ» տառի առկայության պատճառով, ինչպես «ՈՒ ու»-ի դեպքում, պատմությունը կրկնվում է եւ անընդունելի են նույն, արդեն վերը շարադրված պատճառներով:

Ավելացնենք, որ գրանշանների հավաքածուներում «Լ», «մն», «վն» «Ք» եւ այլ կցագրությունների առկայությունը ապահովում են բնագրերի լիարժեք վերարտադրումը:

## Այբբենական դասակարգում

Այբբենական դասակարգումը, բնականորեն, կատարվում է ըստ ավանդական այբուբենի եւ հայերենում ընդունված այբբենական դասակարգման եղանակով: «ՈՒ ու» եւ «Լ» գրանշանները դիտարկվում են, համապատասխանաբար, որպես «Ո ո» «Ի Լ» եւ «Ե Ե» «Ի Լ» տառերի զուգակցություններ եւ դասակարգվում են որպես այդպիսին:

## Երկու այբուբենների տարբերակ

Եթե հրաժարվենք միասնականացման եւ ավանդության պահպանության պահանջներից, ապա ներկա վիճակում հայկական համակարգերը պետք է ներկայացվեն երկու այբուբենով՝ ավանդական եւ բարեփոխված: Հաշվի առնելով գրանշանային ճանաչելիության սկզբունքը, այս տարբերակները կունենան հետեւյալ տեսքը՝

Ավանդական այբուբեն

Ա ա	Ժ ժ	Ճ ճ	Ռ ռ	Օ օ
Բ բ	Ի ի	Մ մ	Ս ս	Ֆ ֆ
Գ գ	Լ լ	Յ յ	Վ վ	
Դ դ	Խ խ	Ն ն	Տ տ	
Ե ե	Ծ ծ	Շ շ	Ր ր	
Զ զ	Կ կ	Ո ո	Ց ց	
Է է	Հ հ	Չ չ	Ի լ	
Ը ը	Ձ ձ	Պ պ	Փ փ	
Թ թ	Ղ ղ	Ջ յ	Ք ք	

Բարեփոխված Սովետական այբուբեն

Ա ա	Ժ ժ	Ճ ճ	Ռ ռ	ԵՒ եւ
Բ բ	Ի ի	Մ մ	Ս ս	Օ օ
Գ գ	Լ լ	Յ յ	Վ վ	Ֆ ֆ
Դ դ	Խ խ	Ն ն	Տ տ	
Ե ե	Ծ ծ	Շ շ	Ր ր	
Զ զ	Կ կ	Ո ո	Ց ց	
Է է	Հ հ	Չ չ	ՈՒ ու	
Ը ը	Ձ ձ	Պ պ	Փ փ	
Թ թ	Ղ ղ	Ջ յ	Ք ք	

\* Օ, Ֆ, Ու, ԵՒ տառերին թվային արժեքներ չեն վերագրվում

Վերջինում առկա են «Ու ու», «ԵՒ եւ» տառերը եւ բացակայում է ավանդական «Է լ» տառը: Ճիշտ է, այս տարբերակում բացակայում են ներքին հակասություններն ու անտրամաբանությունները, սակայն թելադրվում է երկու անհամատեղելի գրանշանային համակարգերի կիրառում եւ, հետեւաբար, հայերեն համակարգերի երկու ստանդարտների ստեղծում, կիրառում եւ զարգացում: Սկզբունքորեն, սա ճիշտ լուծում է, սակայն ո՛չ մեկի կողմից չի առաջարկվում՝ միասնականացման խնդրի գերակայության պատճառով:

## 6. Առաջարկվող նախագծի իրականացումներն ու փորձաշրջանը

Վերջին 15 տարիների ընթացքում, համակարգիչներում հայերենի ներմուծման եւ հայկական համակարգերի ստեղծման անհրաժեշտությունից ելնելով, Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել եւ շահագործվում են ավանդական այբուբենի հիման վրա ստեղծված հայկական համակարգեր: Այդ համակարգերը ներդրվել եւ գործում են բոլոր բնագավառներում, ապահովում են հայերեն լեզվով հրատարակչական գործունեությունը, տվյալների ներմուծումն ու շտեմավորումը, այս համակարգերով է կատարվում տեղեկատվության փոխանակումն ու մշակումը միջազգային ցանցերով: Այսօր «ԵՒ եւ» գրանշանը նույնքան ընկալելի եւ տարածված է, ինչքան «Ու ու»-ն: Փաստացի, այբբենական եւ ուղղագրական փոփոխությունները կատարվել եւ դարձել են իրականություն: Ընդունված պետական ստանդարտներում եւ հայերեն ձեւական համակարգերում կիրառվող այբբենական հավաքածուն համընկնում է առաջարկվող օրենքի նախագծում սահմանված գրա-

նշանների հավաքածուին եւ ղեկավարվում են նախագծում շարադրված դասակարգման սկզբունքներով:

Այս համակարգերը միարժեքորեն ընդունվել եւ կիրառվում են Սփյուռքի եւ հայագիտական կենտրոնների կողմից բազմապիսի լեզվամշակութային խնդիրների լուծման համար:

**Փաստորեն**, առաջարկվող նախագիծն ունի լայնածավալ իրականացում եւ անցել է 15 տարվա փորձաքննություն:

---

## **7. Եզրակացություն**

Այբբենական բարեփոխումների անհրաժեշտությունը թելադրվել է ժամանակի պահանջով եւ պետք է արտացոլի արդի պահանջների, ավանդապահության եւ լեզվամշակութային 1600-ամյա ժառանգության պահպանման եւ զարգացման հրամայականով:

Օրենքի հրատապությունը պայմանավորված է ժամանակակից տեղեկատվական համակարգերի աննախընթաց զարգացման պայմաններում հայերեն համակարգերի ստեղծումը, ներդրումն եւ զարգացումը կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՄԱՍԻՆ» նախագծի ընդունումը միարժեքորեն կապահովեր 1. կետում շարադրված նպատակների իրականացման համար անհրաժեշտ իրավական դաշտը: